ՑԱՆՑԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԾՁԲ-2020/14-ԵՊԲՀ-1

ք. Երևան «___» _____ 2020թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը ի դեմս ռեկտոր Ա. Ա.Մուրադյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՅԹԻ 365» ՍՊ ընկերությունը (որը հանդես է գալիս համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագրով «Հիբրիդ Սիսթեմս» ՍՊ ընկերության (**ՀՎՀՀ 00157195**) հետ), ի դեմս ընկերության լիազորված ներկայացուցիչ՝ Ն. Խաչատրյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ցանցային ենթակառուցվածքների կառուցման և վերակառուցման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների։

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով։

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը։ Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը։

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին։

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը։

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը։

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ։

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը։

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին։

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ։ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 15000000(տասնը հինգ միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[19]

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

---

[19] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[25]

---

[25] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

7.7 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.111 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է **12** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
<<Երևանի Միխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>	«ԱՅԹԻ 365» ՍՊԸ
Հիմնադրամ	Հասցե՝ ք. Երևան, Ահարոնյան 2
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2	Բանկ՝ «Կոնվերս բանկ» ՓԲԸ
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ	Հ/Հ 1930070121830100
հ/հ 11500166513800	ՀՎՀՀ 00192202
ՀՎՀՀ 01503448	Տնօրեն՝ Տ. Նազարյան
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան	
_____	----------
(ստորագրությունը)	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.04.15 14:16:44 AMST

NAZARYAN TIGRAN 3905840529
2020.04.14 14:27:00 +04'00'

Հավելված N 1
« » 2020թ. կնքված
«ԳՀԾՁԲ-2020/14-ԵՊԲՀ-1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	72711200	ԵՊԲՀ-ի ցանցային ենթակառուցվածքի արդիականացում և վերակառուցում**	Դրամ	9000000	1	ք.Երևան, Կորյունի 2 հասցեով	2020 թվականին կողմերի միջև կնքվող պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 100 օրացուցային օրվա ընթացքում
2	72711200	Հարացի թիվ 1 և Մուրացան համալսարանական հիվանդանոցաներում ցանցային ենթակառուցվածքի կառուցում***	Դրամ	6000000	1	ք.Երևան, Աբովյան 60 և Մուրացան 114 հասցեներով	2020 թվականին կողմերի միջև կնքվող պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 100 օրացուցային օրվա ընթացքում

****Ցանցային ենթակառուցվածքի վերակառուցումն իր մեջ ներառում է՝**

1. Ընթացիկ ցանցային ենթակառուցվածքի վերակառուցում՝ համաձայն նախագծված ֆիզիկական և տրամաբանական տոպոլոգիաների.
   1.1. ցանցային ենթակառուցվածքի վերակառուցում հիմնական, բաշխիչ և մուտքային մակարդակներով:
   1.2. բացառությամբ «Անատոմիա» մասնաշենքից, մնացած բոլոր շինություններում կապակցման հանգույցների բաժանում երկու մասի՝ հիմնական և բաշխիչ:
   1.3. հիմնական կապակցման հանգույցների փոխկապակցում բաշխիչ հանգույցների հետ, որոնք հանդիսանում են յուրաքանչյուր հարկի բաշխման կետերը:
   1.4. «Բիոքիմիա», «Վարչական» և «Անատոմիա» շինությունների հիմնական հանգույցների կապակցում սերվերային մասի հետ, որը տեղակայված է «Ընտանեկան բժշկության» մասնաշենքում:
   1.5. «Անատոմիա» մասնաշենքից «Բիոքիմիա» շինություն միացած շղթայատիպ ընթացիկ օգտագործվող օպտիկամանրաթելային կապուղին հարկավոր է անջատել, սակայն թողնել որպես ռեզերվային տարբերակ «Բիոքիմիա» շինության համար

1.6. հիմնական մակարդակի ցանցը բաղկացած է երթուղիչից և կոմուտատորից։
1.7. հիմնական երթուղիչը միանալու է հիմնական կոմուտատորին 10 գիգաբիթ/վարկյան արագությամբ։
1.8. հիմնական կոմուտատորը ապահովելու է 10 գիգաբիթ/վարկյան օպտիկամանրաթելային հնարավորությամբ աշխատանք։
1.9. կոմուտատորները ապահովելու են ցանցի սեգմենտավորումը և պորտերի անվտանգ կարգավորումը։
1.10. հիմնական կոմուտատորը միանում է կամպուսի շինությունների հիմնական կապուղիներին օպտիկամանրաթփլային կապուղով՝ 10 գիգաբիթ/վարկյան արագությամբ։
1.11. հիմնական մակարդակի ցանցի հետ կապուղին ապահովելու է օպտիկամանրաթելային 10 գիգաբիթ/վարկյան արագություն։
1.12. մուտքային մակարդակի կոմուտատորները միանալու են բաշխիչ կոմուտատորներին 10 գիգաբիթ/վարկյան արագությամբ, իսկ օգտագործողներին՝ 1 գիգաբիթ/վարկյան արագությամբ։
1.13. յուրաքանչյուր մուտքային մակարդակի կոմուտատոր միանալու է նույն հարկում տեղակայված մեկ բաշխիչ մակարդակի կոմուտատորին։
1.14. հիմնական մակարդակի ցանցից դեպի բաշխիչ մակարդակի ցանց միացումները կազմակերպված են օպտիկամանրաթելային կապուղով՝ 10 գիգաբիթ/վարկյան արագությամբ։
1.15. նույն հարկում տեղակայված կետերը, որոնց միջև հեռավորությունը գերազանցում է 90 մետրը, նույնպես միանում են օպտիկամանրաթելային կապուղով՝ 10 գիգաբիթ/վարկյան արագությամբ։
1.16. օգտագործողները միանում են մուտքային մակարդակի ցանցին առնվազն «Ethernet Cat5e» տեսակի մալուխով։
1.17. մալուխները անցնում են մալուխատարերով և համարակալված են՝ նույնականացումն ապահովելու համար։
1.18. Անլար ցանցային ենթակառուցվածքի ըդլայնում «Ընտանեկան բժշկության» մասնաշենք։
1.19. Անլար ցանցային ենթակառուցվածքի մուտքային կետերի վերաբաշխում և (կամ) ավելացում։
1.20. Անլար ցանցային ենթակառուցվածքի ծրագրային կառավարման հագնույցի վերակարգավորում։

2. Անվտանգության կարգավորումներ.
2.1. համակարգչային ցանցի սեգմենտավորում ըստ նշանակության VLAN տեխնոլոգիայի միջոցով, ներառյալ անլար ցանցերը,
2.2. մուտքային մակարդակի կոմուտատորներում «port security» տեխնոլոգիայի կիրառում,
2.3. միջցանցային հոսքերը կառավարման կազմակերպում ֆայերվոլների միջոցով,
2.4. հեռահար կապուղու կազմակերպում «Մուրացան բժշկական կենտրոն»-ի հետ «IPSec VPN» տեխնոլոգիայի միջոցով՝ կիրառելով արդի ծածկագրման ալգորիթմներ։

Տվյալ ծառայության մատուցման համար հետևյալ սարքավորումները տրամադրվում են պատվիրատուի կողմից՝

ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	ՔԱՆԱԿ
Կոմուտատորներ	
L2 կառավարվող կոմուտատոր հագեցած 24 10/100/1000 Ethernet պորտերով, 2 SFP+ պորտերով, 2MB flash հիշողությամբ և հետևյալ հատկություններով՝ Non-blocking Layer 2 switching capacity • 16K host table • IEEE 802.1Q VLAN • Supports up to 4K VLANs • Port isolation • Port security • Broadcast storm control • Port mirroring of ingress/egress traffic • Rapid Spanning Tree Protocol • Access Control List • MikroTik neighbor discovery • SNMP • Web-based GUI	28
L2/L3 կառավարվող կոմուտատոր հագեցած 1 10/100/1000 Ethernet պորտով, 8 SFP+ պորտերով, 512MB օպերատիվ հիշողությամբ, 16MB flash հիշողությամբ, 800 MHz dual core պրոցեսորով և հետևյալ հատկություններով՝ Non-blocking Layer 2 switching capacity • 16K host table • IEEE 802.1Q VLAN • Supports up	4

to 4K VLANs • Port isolation • Port security • Broadcast storm control • Port mirroring of ingress/egress traffic • Rapid Spanning Tree Protocol • Access Control List • MikroTik neighbor discovery • SNMP • Web-based GUI	
L2/L3 կառավարվող կոմուտատոր հագեցած 1 10/100/1000 Ethernet պորտով, 16 SFP+ պորտերով 1GB օպերատիվ հիշողությամբ, 16MB flash հիշողությամբ, 800 MHz dual core պրոցեսորով և հետևյալ հատկություններով՝ Non-blocking Layer 2 switching capacity • 16K host table • IEEE 802.1Q VLAN • Supports up to 4K VLANs • Port isolation • Port security • Broadcast storm control • Port mirroring of ingress/egress traffic • Rapid Spanning Tree Protocol • Access Control List • MikroTik neighbor discovery • SNMP • Web-based GUI	4
Երթուղիչներ	
Երթուղիչ հագեցած 7 10/100/1000 Ethernet պորտերով, 1 Ethernet combo պորտով, 1 SFP+ պորտով, 2GB օպերատիվ հիշողությամբ, 128MB NAND հիշողությամբ և 1.2GHz պրոցեսորով:	2
SFP+ մոդուլներ	
10G SFP+ transceiver with a LC connector, 850nm, for up to 300 meter Multi Mode fiber connections	124
Մալուխներ	
8-Core multimode fiber optic cable	900 մետր
8-Core multimode fiber optic cable, outdoor	100 մետր
Fiber optic boxes, multimode	26
UTP Cat5e cable	2000 մետր

Ծառայության մատուցման ընթացքում այլ անհրաժեշտ պահեստամասերը պետք է տրամադրվեն մատուցողի կողմից:

3. Ընթացիկ ցանցային ենթակառուցվածքի վերակառուցման համար նախագծված ֆիզիկական և տրամաբանական տոպոլոգիաները հանդիսանում են կոնֆեդենցիալ և անհրաժեշտության դեպքում դրանք կարող են տրամադրվել մասնակցին գաղտնագրված արտաքին կրիչներով, ընթացակարգի քարտուղարին էլեկտրոնային եղանակով նման պահանջ ներկայացնելու դեպքում՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում:
4. Ծառայությունը պետք է իրականացվի EC-Council Certified Ethical Hacher հավաստագիր ունեցող (պարտադիր պայման) մասնակցի կողմից: EC-Council Certified Network Defense Architect հավաստագրի առկայությունը՝ կդիտվի իբրև առավելություն:

***** Ցանցային ենթակառուցվածքի կառուցումն իր մեջ ներառում է՝**

5. Ցանցային ենթակառուցվածքի կառուցում՝ համաձայն նախագծված ֆիզիկական և տրամաբանական տոպոլոգիաների.
   5.1. ցանցային ենթակառուցվածքի կառուցում հիմնական, բաշխիչ և մուտքային մակարդակներով:
   5.2. «Մուրացան հիվանդանոցային համալիր»-ում բոլոր շինությունների բաշխման կետերը միանում են սերվերային մասում տեղակայված հիմնական կետին՝ օպտիկամանրաթելային 10 գիգաբիթ/վարկյան արագությամբ կապուղիներով:
   5.3. «Մուրացան հիվանդանոցային համալիր»-ի սերվերային մասը տեղակայված է երրորդ մասնաճյուղում և բաղկացած է երթուղիչից և կոմուտատորից, որոնք իրար միանում են 10գ/վ արագությամբ օպտիկամանրաթելային կապուղով:
   5.4. հեռահար կապուղու կազմակերպում «Մուրացան բժշկական կենտրոն»-ի և հիմնական սերվերային հանգույցի միջև «IPSec VPN» տեխնոլոգիայի միջոցով՝ կիրառելով արդի ծածկագրման ալգորիթմներ:

5.5. «Մուրացան հիվանդանոցային համալիր»-ի հիմնական մակարդակի ցանցը բաղկացած է երթուղիչից և կոմուտատորից:

5.6. «Մուրացան հիվանդանոցային համալիր»-ի հիմնական երթուղիչը միանալու է հիմնական կոմուտատորին 10 գիգաբիթ/վարկյան արագությամբ:

5.7. «Մուրացան հիվանդանոցային համալիր»-ի հիմնական կոմուտատորը ապահովելու է 10 գիգաբիթ/վարկյան օպտիկամանրաթելային հնարավորությամբ աշխատանք:

5.8. «Մուրացան հիվանդանոցային համալիրի»-ի կոմուտատորները ապահովելու են ցանցի սեգմենտավորումը և պորտերի անվտանգ կարգավորումը:

5.9. «Հերացի» պոլիկլինիկայի ցանցային ենթակառուցվածքը բաղկացած է հիմնական և բաշխիչ մասերից , որոնք հանդիսանում են յուրաքանչյուր հարկի բաշխման կետերը:

5.10. «Հերացի» պոլիկլինիկայի հիմնական մակարդակի ցանցի հետ կապուղին ապահովելու է օպտիկամանրաթելային 10 գիգաբիթ/վարկյան արագություն:

5.11. «Մուրացան հիվանդանոցային համալիր»-ի և «Հերացի» պոլիկլինիկայի հիմնական մակարդակի ցանցից դեպի բաշխիչ մակարդակի ցանց միացումները կազմակերպված են օպտիկամանրաթելային կապուղով՝ 10 գիգաբիթ/վարկյան արագությամբ:

5.12. օգտագործողները միանում են մուտքային մակարդակի ցանցին առնվազն «Ethernet Cat5e» տեսակի մալուխով:

5.13. մալուխները անցնում են մալուխատարերով և համարակալված են՝ նույնականացումն ապահովելու համար:

5.14. Անլար ցանցյային ենթակառուցվածքի կառուցում «Մուրացան հիվանդանոցային համալիր»-ի և «Հերացի» պոլիկլինիկայի համար:

6. Անվտանգության կարգավորումներ.

6.1. համակարգչային ցանցի սեգմենտավորում ըստ նշանակության VLAN տեխնոլոգիայի միջոցով, ներառյալ անլար ցանցերը,

6.2. մուտքային մակարդակի կոմուտատորներում «port security» տեխնոլոգիայի կիրառում,

6.3. միջցանցային հոսքերը կառավարման կազմակերպում ֆայերվոլների միջոցով,

6.4. հեռահար կապուղու կազմակերպում «Հերացի բժշկական կենտրոնի» հետ «IPSec VPN» տեխնոլոգիայի միջոցով՝ կիրառելով արդի ծածկագրման ալգորիթմներ:

Տվյալ ծառայության մատուցման համար հետևյալ սարքավորումները տրամադրվում են պատվիրատուի կողմից՝

ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	ՔԱՆԱԿ
Կոմուտատորներ	
L2 կառավարվող կոմուտատոր հագեցած 24 10/100/1000 Ethernet պորտերով, 2 SFP+ պորտերով, 2MB flash հիշողությամբ և հետևյալ հատկություններով՝ Non-blocking Layer 2 switching capacity • 16K host table • IEEE 802.1Q VLAN • Supports up to 4K VLANs • Port isolation • Port security • Broadcast storm control • Port mirroring of ingress/egress traffic • Rapid Spanning Tree Protocol • Access Control List • MikroTik neighbor discovery • SNMP • Web-based GUI	16
L2/L3 կառավարվող կոմուտատոր հագեցած 1 10/100/1000 Ethernet պորտով, 8 SFP+ պորտերով, 512MB օպերատիվ հիշողությամբ, 16MB flash հիշողությամբ, 800 MHz dual core պրոցեսորով և հետևյալ հատկություններով՝ Non-blocking Layer 2 switching capacity • 16K host table • IEEE 802.1Q VLAN • Supports up to 4K VLANs • Port isolation • Port security • Broadcast storm control • Port mirroring of ingress/egress traffic • Rapid Spanning Tree Protocol • Access Control List • MikroTik neighbor discovery • SNMP • Web-based GUI	2
L2/L3 կառավարվող կոմուտատոր հագեցած 1 10/100/1000 Ethernet պորտով, 16 SFP+ պորտերով 1GB օպերատիվ հիշողությամբ, 16MB flash հիշողությամբ, 800 MHz dual core պրոցեսորով և հետևյալ հատկություններով՝	2

Non-blocking Layer 2 switching capacity • 16K host table • IEEE 802.1Q VLAN • Supports up to 4K VLANs • Port isolation • Port security • Broadcast storm control • Port mirroring of ingress/egress traffic • Rapid Spanning Tree Protocol • Access Control List • MikroTik neighbor discovery • SNMP • Web-based GUI	
Երթուղիչներ	
Երթուղիչ հագեցած 7 10/100/1000 Ethernet պորտերով, 1 Ethernet combo պորտով, 1 SFP+ պորտով, 2GB օպերատիվ հիշողությամբ, 128MB NAND հիշողությամբ և 1.2GHz պրոցեսորով:	2
SFP+ մոդուլներ	
10G SFP+ transceiver with a LC connector, 850nm, for up to 300 meter Multi Mode fiber connections	50
Մալուխներ	
8-Core multimode fiber optic cable	900 մետր
8-Core multimode fiber optic cable, outdoor	100 մետր
Fiber optic boxes, multimode	15
UTP Cat5e cable	2000 մետր

Ծառայության մատուցման ընթացքում այլ անհրաժեշտ պահեստամասերը պետք է տրամադրվեն մատուցողի կողմից:Ընթացիկ ցանցային ենթակառուցվածքի կառուցման համար նախագծված ֆիզիկական և տրամաբանական տոպոլոգիաները հանդիսանում են կոնֆեդենցիալ և անհրաժեշտության դեպքում դրանք կարող են տրամադրվել մասնակցին գաղտնագրված արտաքին կրիչներով, ընթացակարգի քարտուղարին էլեկտրոնային եղանակով նման պահանջ ներկայացնելու դեպքում՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

7. Ծառայությունը պետք է իրականացվի EC-Council Certified Ethical Hacher հավաստագիր ունեցող (պարտադիր պայման) մասնակցի կողմից: EC-Council Certified Network Defense Architect հավաստագրի առկայությունը՝ կդիտվի իբրև առավելություն:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
<<Երևանի Միխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

_____
(ստորագրությունը)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՅԹԻ 365» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ահարոնյան 2
Բանկ՝ «Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930070121830100
ՀՎՀՀ 00192202
Տնօրեն՝ Տ. Նազարյան

/ստորագրություն/
Կ.Տ

NAZARYAN
TIGRAN
3905840529
2020.04.14
14:27:26 +04'00'

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.04.15 14:17:05 AMST

Հավելված N 2
« » 2020թ. կնքված
«ԳՀԾՁԲ-2020/14-ԵՊԲՀ-1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ
դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	Մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72711200	ԵՊԲՀ-ի ցանցային ենթակառուցվածքի արդիականացում և վերակառուցում	-	-	-	-	-	-	9000000	9000000	9000000	9000000	9000000	9000000	9000000
2	72711200	Հարացի թիվ 1 և Մուրացան համալսարանական հիվանդանոցաներում ցանցային ենթակառուցվածքի կառուցում	-	-	-	-	-	-	6000000	6000000	6000000	6000000	6000000	6000000	6000000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ
<<Երևանի Միխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

_____
(ստորագրությունը)
Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«ԱՅԹԻ 365» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ահարոնյան 2
Բանկ՝ «Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930070121830100
ՀՎՀՀ 00192202
Տնօրեն՝ Տ. Նազարյան

/ստորագրություն/
Կ.Տ

NAZARYAN
TIGRAN
3905840529
2020.04.14
14:28:39 +04'00'

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.04.15 14:17:21 AMST

Հավելված 3
« » 2020թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2020թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն